օրն է ուղարկվել վերջինիս էլեկտրոնային փոստի հասցեին:

Դատարանը հարկ է համարում նաև հավելել, որ ի հիմնավորումն վերնշյալ փաստարկի Հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ իրավական հիմք, կամ հղում որևէ պայմանագրային դրույթի, ինչից հետևում է, որ կողմերը ելնելով իրենց կամքի ինքնավարության սկզբունքից սահմանել են պայմանագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ դրույթ՝ այն է պայմանգրի կնքման պահը:

Դատարանը հարկ է համարում նաև ընդգծել, որ ստորագրված կամ կնքված Համաձայնագիրը Հայցվորի էլեկտրոնային փոստին ուղարկելու փաստը՝ այն ուժի մեջ մտնելու տեսանկյունից չի արժևորվում թե՛ օրենքով, թե՛ կողմերի միջև կնքված Պայմանագրով կամ Համաձայնագրով:

Վերոգրյալով հերքվում են պայմանագիրը Հայցվորի էլեկտրոնային փոստին ուղարկելու պահից ուժի մեջ մտնելու վերաբերյալ Հայցվորի փաստարկները:

Ամբողջ վերոնշյալի հիման վրա՝ Դատարանը գալիս է ամփոփ եզրահանգման առ այն, որ Պատվիրատուի վիճարկվող որոշումը՝ սույն հայցադիմումում նշված հիմքերի սահմաններում ենթակա չէ անվավեր ճանաչման, ինչից էլ հետևում է, որ հայցը ենթակա է մերժման:

6. <u>Դատարանի ծախսերի բաշխման վերաբերյալ Դատարանի պատճառաբանությունները.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ հայցը ենթակա է մերժման, իսկ Հայցվորի կողմից՝ 50.000,00 ՀՀ դրամի չափով նախապես վճարվել է պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 241-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Իփիէս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարան համայնքային կառավարչական հիմնարկի, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ թիվ «ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/03» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Իփիէս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավարի 03.05.2024 թվականի թիվ Ե-2182 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **ԱԼԼԱ ՔՅՈՒՐՔՉՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am